



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



Ս. ԱՍՏՈՒԾԱԾՆԱՅ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Ս. ՊԱՏԱՐԱԳ՝ «ԱՐԱՐԱՏ» ՏԱՆ ՄԷՉ

Ուրախ ենք յայտնելու մեր հաւատացեալ ժողովուրդին, որ Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին առիթով, Ուրբաթ, 11 Օգոստոս 2006, առաւօտեան ժամը 10:30-ին, Ս. Պատարագ պիտի մատուցուի «Արարատ Տան» մատրան մէջ, Միշըն Հիլզ:

Արարողութեան պիտի հանդիսապետէ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան: Պիտի մասնակցին Թեմիս հոգեւոր հովիւները:

Ս. Պատարագը պիտի մատուցանէ եւ պիտի քարոզէ Օրէնճ Քաունթիի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Հրանդ Քիւյ. Երեցեան: Պիտի կատարուի հաւաքական խոստովանանք եւ խաղողի օրհնութեան աւանդական արարողութիւն:

Առաջնորդ Սրբազանն ու հոգեւոր հայրերը ապա պիտի այցելեն «Արարատ» Տան հիւանդանոցի բաժինը եւ իրենց բարեմաղթութիւնները պիտի փոխանցեն պատասպարեալներուն, ինչպէս նաեւ պատասխանատուներուն եւ անձնակազմի անդամներուն:

ON THE FEAST OF THE ASSUMPTION OF THE HOLY VIRGIN

HOLY MASS AT ARARAT HOME

On the Feast of the Assumption of the Holy Virgin, Holy Mass will be conducted at "Ararat Home" in Mission Hills on Friday, October 11, 2006 at 10:30 a.m.

His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Mass, and Prelacy clergy members will participate.

Rev. Hrant Yeretsian, Pastor of Forty Martyrs Church, will conduct the Mass and deliver the sermon, followed by the traditional blessing of the grapes.

Following church services, the Prelate and clergy order will visit the hospital section where they will convey their best wishes to the patients, directors and staff members.